յիմ զաւակացն և կամ յազգականացն քահանայ լինի, և Լուսաւորչին հաւանութեամբն լինի, և Լուսաւորչի նա աթոռոյն հնազանդ լինի, նա հանց բաժին առնու 'ի յեկեղեցւոյն մտոցն, որպէս բնական երէց մի, այլ ոչ տէրութիւն առնէ եկեղեցւոյն։ Վկայութեամբն Աստուծոյ և արժանահաւատ վկայից որ աստ պատահեցան։

Գրեցաւ գիրս 'ի Թվիս Հայոց (տեղի կնքոյ) ՊԽԷ »։

Եկեղեցաշէն Պ. Սինանս գնած և ընծայած է Ս. Նիկողայոս եկեղեցւոյն գեղեցկագիր և ընտիր ճաշոց մի, որ ցարդ պահուած է եկեղեցւոյս դիւանին մէջ։ Ճաշոցը գրուած է 'ի Թուականութեան Հայոց ՁՂԸ, յաշխարհն Հոնաց ('ի Ղրիմ), յերբեմն հոյակապ և 'ի հռչակաւոր մայրաքաղաքն Սուրխաթ, (այժմ ողորմելի գիւղաքաղաք, Հին կամ Էսկի Ղրիմ կոչուած), ձեռամբ Ստեփանոս երիցու։ Ճաշոցիս կրկին հին յիշատակարաններէն վերջը, (առաջինը գրութեան ճաշոցին, երկրորդը՝ Սինանին նուիրատուութեան), մաքուր՝ բոլոր գրով գտայ գրուած. « Ցամի Տեառն 1756, օրն յունիսի 28, սկսաւ շինումն եկեղեցւոյս Կամենիցոյ Հայոց Ս. Նիկողայոսի, և աւարտեցաւ յամի Տեառն 1767, օրն առաջին յուլիսի, շինումն նոյնոյ եկեղեցւոյն։ Ցամի Տեառն 1767 օգոստոսի եղև բերումն թափօրով հրաշագործ պատկերին Երանուհոյ Կուսին՝ 'ի նոյն եկեղեցին »։

Ժամանակ անցնելէն վերջը՝ Սինանի շինել տուած եկեղեցին նեղ եկել է, այն պատճառի՝ ոմն Հրիհոր՝ որդի Զատկի « յոյժ քրիստոսասէր » ընդարձակել է. « վասն զի փոքրագոյն էր եկեղեցիս այս, քանզի միշտ տեսանելով եթէ ոչ գոյր տեղի բա-